989

1. Ուզում եմ, Տէր, կապել Քեզ հետ
Ուխտն իմ հավիտենական,
Ուզում եմ, Տէր, ապրել Քեզ պես,
Որ Քեզ հետ հավերժանամ:

Ուզում եմ, Տէր, Քեզ հետ մեկանալ,
Ուզում եմ, Տէր, Քեզնից չհեռանալ,
Ուզում եմ, Տէր, ես Քեզ մոտ մնալ,
Քեզ պես սուրբ դառնալ,
Սուրբ դառնալ, սեր դառնալ:

2. Ուզում եմ, Տէր, դառնալ մարմնիդ
Մի անբաժան սուրբ մասնիկ,
Ուզում եմ, Տէր, հզոր բազկով
Ինձ էլ հանես այս ճահճից:

3. Ուզում եմ, Տէր, սիրել մարդկանց
Եվ ատել մեղքն աշխարհի,
Ուզում եմ Հոգուդ զորությամբ
Հաղթել գործերն իմ մարմնի:

4. Ուզում եմ, Տէր, ամեն վայրկյան
Նայել խաչյալ իմ Փրկչին,
Խաչի վրա սիրով տարած
Փառավոր հաղթանակին:

Ուզում եմ, Տէր, խաչդ բարձրանալ
Ու Քո ցավերին հաղորդ դառնալ,
Ուզում եմ, Տէր, ես նոր մարդ դառնալ,
Աղ և լույս դառնալ,
Լույս դառնալ, հույս դառնալ: